

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
BIBLIOGRAPHY
БИБЛИОГРАФИЯ

ԳԼՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԳԱՆԵԱՆ*

DOI:10.57155/UOHT5892

ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ
ԵՒ ԳՐԱԳԱՐԱՆԱՅԻՆ ՆՇՈՒՄՆԵՐԻ ԴԻԲԱՆԻ
ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Բանալի բառեր՝ Ուշ միջնադարի գրադարաններ, հայերեն հնատիպ գրքեր, ձեռագիր եւ գրադարանային նշումներ հնատիպ գրքերում, ձեռագիր յիշատակարաններ, յիշատակարանների ժողովածուներ:

Միջնադարի եւ մերձավոր անցեալի մեր տարատեսակ (վանական, եկեղեցական, դպրոցական, անձնական եւ այլ տեսակի) գրադարանների կազմի, կառուցուածքի, տարաբնոյթ գործածութիւնների, գրքերի տէրերի եւ ընդհանրապէս անհատ մարդկանց ընթերցողական հետաքրքրութիւնների, գրքերի շարժերի եւ նմանաբնոյթ այլ հարցերի ընդարձակ-ամբողջական քննութեան խնդիրը մեր գրական մշակոյթի ուսումնասիրման կարեւոր ասպարէզներից մէկն է, որ, ցաւօք, դեռեւս պատշաճ ուշադրութեան չի արժանացել: Այս խնդրի կամ խնդիրների համալիր հետազոտման հիմնական սկզբնաղբիւրները մի քանի տեսակ են. մատենագրական վկայութիւններ, ձեռագրերի յիշատակարանների մէջ առկայ հաղորդումներ¹, վանական², մնացեալ տեսակների³ եւ անձ-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռագրագիտութեան բաժնի վարիչ, Բ. Գ. Պ., gtvardan@yahoo.com հոդվածը ներկայացնելու օրը՝ հոկտեմբերի 26, 2022, գրայտուելու օրը՝ նոյեմբերի 12, 2022:

1 Շատ կան ստացողների անունից գրուած յիշատակարաններ, որոնց մէջ թուարկուած են նրանց ունեցած ձեռագիր գրքերի անունները:

2 Յայտնի են հրատարակուած եւ բազմիցս արծարծուած միայն Սաղմոսավանքի (Փ. Բ. Պ.) եւ Բաղէշի Ամրոդոյ (Փ. Բ. Պ.) վանքի ցուցակները. տես [Գաղեան] Խաչիկ Վարդապետ, «Նորագիտ մագաղաբեայ նոտրագիր ցուցակ Սաղմոսավանքի մատենադարանի», Շողակաթ. Ս. էջմիածնի հայագիտական ժողովածու, Գիրք առաջին, Նուիրուած հայ գրի եւ տպագրութեան մեծ յորելեանին. 412-1512-1912, Վաղարշապատ, 1913, էջ 167-169. տես նաեւ «Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ ցուցակ գրոց Ամրոջու վանոց», հրատ. Սենեքերիմ Տէր-Յակոբեան, Արարատ, 1903, Բ-Գ., էջ 176-189. վերահրատ.՝ «Արարատի» ժառանգութիւնը, Փ. «Արարատ»ի բնագիրներ, հ. Բ... Հրատ. պատրաստեց՝ Սուսաննա Նահապետեան, Դասակարգումը, խմբագրումը եւ առաջարանը՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. էջմիածին, 2017, էջ 665-672:

3 «Վկայի հայերէն ձեռագրերը եւ Յովհաննէս վարդապետ Զօհրապետնի ցուցակը» խորագրով այդպիսի մի գրացուցակ, ուսումնասիրութեամբ հանդերձ, պատրաստել եւ հրատարակու-

նական⁴ մատենադարանների գրացուցակներ, նոյն վանքերի եւ եկեղեցիների ընծայամատեններ⁵, ի վերջոյ՝ ձեռագիր գրքերի մէջ յաճախ հանդիպող ցաքուցրիւ նշումներ⁶: Զեռագրերի մանրամասն նկարագրութիւնների մէջ գրչութեան ժամանակի եւ հետագայի յիշատակարանների ամբողջական վերարտագրութիւններով կատարեալ ձեւով պատկերւում է նրանց ստեղծման, հետագայ կեանքի՝ տեղաշարժերի եւ պատկանելութիւնների ամբողջ ընթացքը: Ըստ այսմ՝ մանրամասն ձեռագրացուցակները մեր գրական եւ գրքային-գրադարանային մշակոյթի պատմութեան վաւերական, շատ թանկարժէք սկզբնաղբիւրներ են:

Սրա կողքը կայ նաեւ այն իրողութիւնը, որ ժԶ-ԺԹ. դարերի ամբողջ ընթացքում մեր ձեռագիր⁷ եւ տպագիր գրքերը կենցաղավարել են կողք կողքի՝ համատեղ, ծառայել են նոյն նպատակներին, կատարել նոյն գործառոյթները: Անգամ՝ առանձին թերթեր կամ մասեր կորցրած պակասաւոր տպագիրները լրացուել-ամբողջացուել են ձեռագրերից ընդօրինակուած թերթերով, այլեւ՝ տպագիր գրքերից ձեռագրեր են օրինակուել. եւ այլն: Ուշ միջնադարի տարատեսակ գրացանկերի մէջ ձեռագրերն ու տպագիրները յիշատակուում են միասին՝ նոյն շարքերում, որոնց մէջ ձեռագիր գրքերի անունները գրւում են «գրչեայ», «գրչայ», իսկ տպագիրներինը՝ «տիպ» կամ օտար «պասմայ» բացատրական բառերով: Աւելին, ձեռագրերի նման, տպագիրների տարբեր՝ ազատ էջերում, լուսանցներում եւ անգամ կազմերի ու կազմաստառների վրայ նոյնպէս գրանցուել են նրանց տպագրութեանն անմիջապէս հետեւող կամ հետագայ ժամանակների տէրերի ձեռագիր գրառումներ՝ ընդարձակ կամ համառօտ յիշատակարաններ եւ տարատեսակ նշումներ, յաճախ էլ՝ գրադարանային գոյքահամարներ:

Ըստ այսմ՝ հեռաւոր եւ մերձաւոր անցեալի մեր գրադարանների համալիր հետազօտութիւնների աղբիւրագիտական հիմքը գրեթէ կիսով չափ թերի կլինի,

թեան ենք յանձնել «Բագմավէյ» հանդէսին: Իսկ միջնադարեան գրացանկերի ուսումնասիրութիւն-հրատարակման աշխատատար եւ շատ պատասխանատու գործը յանձն է առել մեր աշակերտ-աշխատակից Լիլիթ Յովսէփեանը:

4 Տե՛ս, օրինակ, ՄՄ ձեռ. Հ^մ 737. 1բ-2ա «Այսչափ գիրք կայ ինձ՝ ստրուկ Աբրահամ սուտանուն արեղայիս - Ա. Աստուածաշունչ, Բ. Քարոզգիրք Տաթեւացոյն. մէկ՝ Զմուռն հատոր եւ մէկ՝ Ամուռն... Ա. Հայր Մաշտոց»:

5 Մեր ունեցած այսպիսի երկու տասնեակից անէլի բնագրերերից հրատարակել ենք առայժմ միայն մէկը. Վենետիկի հայոց Սուրբ Խաչ եկեղեցու ընծայամատենը. *Էջմիածին*, 2013, Հ^մ ԺԱ., էջ 60-83: Այստեղ կայ ԺԵ. դ. երկրորդ կէսին եկեղեցուն նուիրուած 24 գրքի յիշատակում՝ 15 ձեռագիր, 9 տպագիր (տե՛ս էջ 67):

6 Այս խնդրին կամ ձեռագրերի նկարագրութիւնների հարցակարգի մէջ մեր յաւելած «Նշում» հարցին վերաբերող մանրամասներ տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ., Զեռագիրք 1801-2100, հմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, «Նայիրի» հրատ., 2012, էջ 8-9:

7 Ձեռագրերի համար ժամանակագրական վերջին սահմանը ԺԹ. դար համարելը սխալմունք է, այլ իրականութեան արձանագրում. թէև մեր հին գրականութեան (մատենագրութեան) վերջին սահմանը ԺԸ. դարն է, բայց նրա սկզբնաղբիւրների ձեռագիր վերատարում-ընդօրինակումներ բաւական շատ են արուել նաեւ տասնիններորդ դարի ամբողջ ընթացքում:

եթէ անտեսուի տպագիր (յատկապէս՝ հնատիպ) գրքերի ունեցած նիւթը: Մինչդեռ այս նիւթի համալիր մշակում մեր գիտութեան մէջ բացարձակապէս չի արուել⁸. միայն սիրողական բնույթի երկու հրապարակում արել է Տիգրան Մ. Պետրոսեանցը. առաջինում ձեռագրերի նկարագրութիւնների հետ միասին ներկայացնելով հիմնականում մասնաւոր մարդկանց պատկանող տպագիրների յիշատակարանային նիւթը⁹, որ կրկնել է երկրորդում, այստեղ աւելացնելով նաեւ Աբովեանի անուան Մանկավարժական համալսարանի 1724-1914 թթ. տպագիրների ձեռագիր գրառումներ¹⁰:

Յաջորդը. նորայր Պօղոսեանը շատ օգտակար մի յօդուածով¹¹ «գիտարկել» է Մաշտոցեան Մատենադարանի, Հայաստանի ազգային, Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի եւ Երեւանի պետական համալսարանի գրադարանների 1512-1712 թուականներին տպագրուած «ընդհանուր հաշուով մօտ 40 գիրք: Աւելի ստոյգ, մօտ 40 գրքերում են մեզ պատահել ձեռագիր յիշատակագրութիւններ, իսկ շատուշատ գրքեր պարզապէս զուրկ են նման գրաւոր միջամտութիւններից»¹²: Այստեղ սկզբում ներկայացրել է «Ձեռագիր յիշատակագրու-

⁸ Գոյոյբին ունի այստեսակ խնդիրների վերաբերող՝ քրիստոնէական եւ ոչ-քրիստոնէական գրագիտական բաւական հարուստ գրականութիւն. յիշատակեմք միայն նշանակալի մէկը. *Корпус записей на старопечатных книгах*. Выпуск 1. *Записи на книгах кириллического шрифта, напечатанных в Москве в XVI-XVII вв.*, Составитель **Л. И. Киселева**, Санкт-Петербург, Библиотека Академии наук России, 1992:

⁹ **Վ. Մ. Պետրոսյանց** [= **Տիգրան Պետրոսեանց**], «Ապարանի շրջանի ձեռագրերը, հնատիպ գրքերը եւ այլ հնագրագիտական նյութերը», *ՊԲՀ*, 1981, Հ^տ 1, էջ 148-167:

¹⁰ **Տիգրան Պետրոսեանց, Տիրուհի Սիրեկանեան**, «Հնատիպ, հագուագիտ, սովորական տպագիր գրքերի ձեռագիր յիշատակարանները պատմական սկզբնաղբիւր», *էջմիածին*, 2019, Զ., էջ 92-113: Վերջինիս մէջ տարօրինակ կամ զարմանալի անհշտութիւններ կան. օրինակ՝ ասուած է, որ «Հայաստանում, սփիւտում տպագրուել են յիշատակարաններ պարունակող 50-ից անլի ստուարածաւալ հատորներ», նաեւ՝ վիմագրերի «40-ից անլի հատորներ», վերջիններիս պատրաստողներից մէկն էլ գոյոյբին շունեցող անձ է՝ «Աշոտ Յարութիւնեան» (էջ 92): Նկատենք՝ այս յօդուածի տպագրութեան ժամանակ կար թէ՛ յիշատակարանների եւ թէ՛ վիմագրերի մատենաշարերի 10ական հատոր. գուցէ ասեն, թէ առաջին դէպքում նկատի են ունեցուել նաեւ յիշատակարաններ ունեցող ձեռագրացուցակները, երկրորդում, «Դիւան հայ վիմագրութեան» շարքից բացի, նաեւ վիմագրեր հրատակակած այլ գրքեր, ապա երկու դէպքում էլ թուերը 50ից եւ 40ից շատ ու շատ անլի են: Կամ՝ լեզուաբան նորայր Պօղոսեանն այստեղ «պատմաբան» է (էջ 93), իսկ իտալացի տպարանատէր «Միխէլանջելո Բարբոլի»-ի անուան փոխարէն երկիցս գրած է՝ «Ա.փիլիբեյլօ Բարբոլի» (էջ 95 եւ 96), Մաշտոցեան Մատենադարանի համառօտ ձեռագրացուցակի Բ. հատորի տպագրութեան թուականը 1970ի փոխարէն «1967» է (էջ 96, ծ. 16). եւ այլն: Ըստ այսմ՝ նաեւ մտածելի է, թէ որքանով միշտ են ընթերցուած տպագիրների ձեռագիր գրառումները: Ի դէպ, թէւ առդէն բաւական ժամանակ մեր անունը գրուած է «էջմիածին» ամսագրի խմբագրական խորհրդի անդամների ցանկում, բայց, մանրամասների մէջ չմտնելով ասենք, որ 2018 թ. չորրորդ (Գ.) համաթից յետոյ մենք այդ պարբերականի եւ նրա «խմբագրական» աշխատանքների հետ որեւէ կապ չունենք:

¹¹ **Նորայր Պօղոսեան**, «Հայերէն հնատիպ գրքի ձեռագիր յիշատակութիւններ», *էջմիածին*, 2011, Գ., էջ 122-134:

¹² Նոյն տեղում, էջ 123:

թիւնների տեսակներն ըստ բովանդակային ուղղուածութեան», ապա՝ «Ձեռագիր յիշատակագրութիւնների լեզուական նկարագիրը», վերջում՝ 1-14 թուարկումով «Ձեռագիր յիշատակագրութիւնների նմուշներ»¹³: Նրա մի երկրորդ յօդուած¹⁴ նոյն նիւթի լեզուաբանական քննութեան ներածական շարագրանք է: Ի վերջոյ, բնականաբար աւելիով, այս յօդուածները վերարտադրուել են նրա գրքոյկում¹⁵, որտեղ վերի մեր քաղուածքում յիշուած գրքերի 40 թիւն արդէն 50 է¹⁶: Անկասկած օգտակար եւ հետագայ ծաւալուն աշխատանքների ընթացքում անպայման նկատառելի աշխատանք է, որ, «Յիշատակագրութիւններ»ի աւելի մեծաքանակ բնագրերից (էջ 22-78) բացի, ունի նաեւ նրանց մէջ «Հանդիպող թուականներ»ի (1671-1912), «Օգտագործուած հնատիպ գրքերի թուահամարներ»ի, անձնանունների, տեղանունների, համառօտագրութիւնների եւ գրականութեան ցանկեր:

Այսուհանդերձ, Նորայր Պօղոսեանին հետաքրքրող հիմնական նիւթը հնատիպերի մէջ առկայ յիշատակարաններն են (ինքը նախընտրում է «յիշատակագրութիւն» ձեւը), աւելի ճշգրիտ՝ նրանց լեզուագիտական նշանակութիւնը կամ արժէքը: Նրա հետազօտական խնդրին չի վերաբերում գրադարանային-ընթերցողական հարցերի այն ընդարձակ շրջանակը, որ ներկայացուած է յօդուածիս սկզբում. սրա հետեւանքն է նաեւ այն, որ Հայաստանի գրադարանային շորս մեծ հաստատութիւններում գտել է իրեն հետաքրքրող՝ «յիշատակագրութիւն» ունեցող ընդամէնը 48 միաւոր հնատիպ գիրք:

Իսկ մեր ծրագրած Իրւանը լինելու է Հայոց թէ՛ ընդհանրական եւ թէ՛ յատկապէս՝ մշակոյթի պատմութեան հետազօտման լրացուցիչ եւ կարեւոր սկզբնաղբիւր, որովհետեւ ձեռագիր գրառումները պարզում են գրքերի հետ առնչուած մարդկանց՝ տէրերի, նուիրատուների, վաճառողների, գնորդների, գործարքների վկաների եւ այլոց անունները, վկայում են նոյն գրքերի, բնագրերի եւ իրենց ժամանակների հոգեւոր ու մշակութային կեանքի նկատմամբ ընթերցողների վերաբերմունքի մասին: Յաջորդաբար տարբեր անհատների կամ գրադարանների պատկանած լինելը ցուցադրող գրառումներով պարզում են գրքերի ճակատագրերը, դրանով իսկ երեւում են նաեւ միմեանց հետ մտաւորական մարդկանց ունեցած կապերը, ընդհանրապէս՝ գրքերի նկատմամբ եղած ընթերցողական պահանջարկը, որով էլ՝ գրական մշակոյթի տարածման աշխարհագրութիւնը: Գրքերում առկայ գրադարանային նշումները հնարաւոր են դարձնում վերա-

¹³ Նոյն տեղում, էջ 123-127, 127-130 եւ 130-134. անբաւարար կամ սխալ է առանց աղբիւրների (գիրք, էջ, գրառման հնարաւոր տեղ եւ ժամանակ) նշելու՝ լեզուական երեւոյթների թուարկումը (էջ 128-9):

¹⁴ **Նորայր Պօղոսեան**, «XVI-XVII (=ժՁ-ժԷ.) դարերի հայերէն հնատիպ գրքի յիշատակարանների լեզուն», ԲԵՂ, 2011, Հ^մ 133.2, էջ 22-31:

¹⁵ **Նորայր Պօղոսեան**, Հայ հնատիպ գրքերի ձեռագիր յիշատակագրութիւններ (1512-1712), Երեւան, ԵՊՀ հրատ., 2012, 86 էջ:

¹⁶ Նոյն տեղում, էջ 5. Իսկ էջ 78՝ գոյհանամարներով թուարկել է 48 գիրք:

կանգնելու անցեալի տարատեսակ գրադարանների ունեցած գրքերի քանակը, կազմը եւ բովանդակային ուղղութիւնը:

* * *

Յայտնի է, որ ձեռագիր գիրքը գրւում է մէկ օրինակ, նաեւ՝ որ թէկուզ մեր ձեռագրերը մեզ նման ցրուած են ամբողջ աշխարհում, բայց հիմնականում կենտրոնացած են կայուն հաւաքածոների մէջ, այսինքն՝ գիտութեանն անյայտ մասնաւոր եւ թափառիկ ձեռագրեր բաւական քիչ կան: Մեր ներկայ խնդրի առումով ձեռագրի համեմատ տպագիր գրքի էական տարբերութիւն-իւրայատկութիւնն այն է, որ, նախ՝ քանի որ տպուել-տարածուելուց յետոյ գրքի տպաքանակի ամէն օրինակ ապրել է ուրոյն կեանքով եւ նոյնպիսի՝ ուրոյն գրառում-նշումներ է ստացել, ուրեմն ցանկալի-անհրաժեշտ է քննել բոլոր հնատիպերի տպաքանակի առկայ կամ պահպանուած բոլոր օրինակները, ապա՝ հնատիպ գրքեր բաւական շատ կան թէ՛ անհատ մարդկանց (շատ դէպքերում նաեւ գիտութեանը ո՛չ յայտնի, յատկապէս՝ հաւաքորդների) ձեռքին, թէ՛ անգամ գիւղական շատ տներում եւ մատուռներում:

Նշանակում է՝ մեր մասնագէտ-ձեռագրագէտները նոյնիսկ երեւանի բոլոր գրադարանների նիւթը միաժամանակ մշակել չեն կարող: Հայկական եւ ոչ-հայկական գրադարանային հաստատութիւններին շրջաբերական կոչ ուղարկելը եւս քիչ օգտակար կարող է լինել, որովհետեւ այսպիսի աշխատանք անելու համար մարդ պէտք է ունենայ ձեռագրագիտական գոնէ նուազագոյն փորձ ու հմտութիւն, որի հիմնական տարրերն են. ա) հայերէն բոլոր՝ երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր եւ շղագիր գրչութիւնների ձեռագրեր կարդալու հմտութիւն, բ) գրաբարի լաւ իմացութիւն: Գրչութիւնների իմացութեան խնդիրը հնատիպ գրքերի դէպքում ունի նաեւ մի փոքր աւելի բարդութիւն կամ իւրայատկութիւն. սրանց տէրերի կամ գրառողների մեծ մասը շատ էլ գրագէտ չի եղել, աւելին՝ նաեւ գրելու վարպետութիւն չի ունեցել, ուստի եւ նրանց գրածները յստակ կամ ճշգրիտ կարդալը ամենեւին հեշտ չէ, յաճախ պէտք է գուշակել, թէ ի՛նչ են գրել կամ ի՛նչ են ուզում ասել¹⁷:

Կարելոր է նաեւ Դիւանի ժամանակագրական ընդգրկման հարցը. առայժմ մշակւում է մեր հնատիպ (1512-1800 թթ.) գրքերի նիւթը, սակայն ըստ ամենայնի արժէ գուգահեռ սկսել նաեւ ժԹ. դարի առաջին կէսի կամ գուցէ ամբողջ դարի գրքերի քննութիւնը, որին երեւի արժէ յաջորդի ժԹ-ի. դարերի հեղինակային ինքնագրերի եւ գրադարանատէրերի «Ի գրեանց» (*Ex Libris*) պիտակների, այլեւ՝ նշանաւոր մտաւորականների գրքերի լուսանցագրութիւնների ուսումնասիրում-հրապարակումը¹⁸:

¹⁷ Օրինակ՝ նոտրգիր գրչութեան «ն» եւ «ո» գրերը բաւական յաճախ նոյնական գծապատկեր են ունենում:

¹⁸ Վերջին երկու ամեկիները, որ ձեռագրագիտական մեծ հմտութիւն չեն պահանջում, հիմա իսկ կարող են սկսել Հայաստանի Ազգային գրադարանում:

Ըստ այսմ՝ ներկայ հնարաւորութիւնների եւ պայմանների թելադրանքով նախատեսում ենք Դիւանը կազմել եւ հրատարակել ըստ մեծ հաւաքածոներ ունեցող գրադարանների (Մատենադարան, Ազգային գրադարան...), ապա առանձին հատորներ կարող են կազմուել փոքր հաւաքածոների նիւթերի միաւորումներով: Վերը յիշուած շորս հաստատութիւնից երկուսում՝ Մատենադարանում եւ Ազգային գրադարանում կայ համապատասխանաբար 1-2542 եւ 1-2380 հնատիպ գիրք. արդէն մի քանի տարի է Մատենադարանում Տաթևիկի Մանուկեանը եւ Քնարիկ Սարգսեանը¹⁹, իսկ Ազգային գրադարանում Սուսաննա Նահապետեանն²⁰ աշխատում են՝ էջ առ էջ քննում են գրքերը եւ առայժմ պարզել ու արձանագրել են մեր թուարկած հարցերին ուղղակի վերաբերող մի քանի հարիւր գիրք (բնականաբար, այս քանակն օրէցօր աճում է): Արուել է քննուած գրքերի պարունակած նիւթի նախնական մշակումը եւ յիշատակարան-յիշատակագրութիւնների վերծանումները: Առայժմ գրքերը հետազօտում եւ նրանց նիւթերն արձանագրում են ըստ գրադարանային գոյքահամարների՝ 1, 2, 3...: Նաեւ՝ հետագայ վերստուգումների դիւրութեան նպատակով գրառումների բոլոր էջերը լուսանկարուել են:

* * *

Միւս խնդիրը, հնատիպ գրքի առկայ մատենագիտութիւնը²¹ անցած տասնամեակների ընթացքում մեր գրքագիտութեան համար բաւական օգտակար դեր է կատարել, բայց նրա կազմութեան շատ սկզբունքներ վաղուց հնացած են²², այդուհանդերձ, նոր՝ բարելաւուած եւ աւելի կատարեալ ցուցակ-մատենագիտութեան պատրաստումը համարում ենք տարբեր հարց, որի մասին հանդէս ենք գալու մի այլ առիթով, իսկ ներկայ Դիւանում նիւթի դասաւորութեան հիմնական սկզբունքը լինելու է գրքերի տպագրութեան ժամանակագրական կարգը՝ նոյն մատենագիտութեան մէջ գրքերի ստացած կարգային համարներով, համառօտ վերնագրերով եւ նոյն գրքերի օրինակների քանակին համապատասխանող ենթահամարներով:

Այսպէս՝

1. ՌԻՐԲԱԹԱԳԻՐՔ, Վեճեաիկ, տպ. Յակոբ Մեղապարտի, 1512:

Ա. Մ 656 (գոյֆահամար նոյն հրատարակութեան ամէն միաւորի).

¹⁹ Իրենց աշխատանքին վերաբերող նախնական հաղորդումը հետեւում է ներկայ յօդուածին:

²⁰ Հմմտ. **Սուսաննա Նահապետեան**, «Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր յիշատակարանների եւ գրադարանային նշումների դիւանը (ծրագրի համառօտ բնութագիրը եւ ընթացքը)» *Բանբեր Հայաստանի գրադարանների*, 2016, Հ^մ 2, էջ 70-74 ([https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/banbergrad/2016\(2\).pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/banbergrad/2016(2).pdf) – 16 հոկտ. 2022 թ.):

²¹ Հայ գիրքը 1512-1800 թուականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն, [Կազմեցին] Ն. Ա. Ոսկանեան, Ք. Ա. Կորկոտեան, Ա. Մ. Սալպեան, Առաջաբանը Ն. Ա. Ոսկանեանի, Խմբագրութեամբ Ռ. Ա. Իշխանեանի, Երևան, 1988, ԾԲ., 864 էջ:

²² Հմմտ., օրինակ, **Մարինէ Սարգսեան**, «Հայերէն հնատիպ գրքերի յիշատակարանների բնագրերի մշակման հարցեր», *էջմիածին*, 2017, ԺԱ., էջ 137-148:

ա. Կնփադրոշմներ.

բ. Գրադարանային նշումներ.

գ. Գրառում (յիշատակարան-յիշատակագրութիւններ. ժամակագրական կարգով, անթուականները մօտաւոր թուագրելով).

դ. Գրչափորձ:

Բ. ՀԱԳ 3623...²³

27. ԱՌԱԻԵԼ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻԻՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ. Թարգմ. Պետրոս-Պօղոս Բահանայ, Հայերէն եւ իտալերէն, Հոռոմ, տպ. Ուրբանեան, 1630:

Ա. Մ 1024

Բ. ՀԱԳ 4626

Կնքագրոշմները շատ գրքերում նոյնական եւ յաճախ կրկնուող են, ուստի արժէ հատոր(ներ)ի սկզբում կանոնաւոր համարակալումով, լուսանկարներով եւ վերծանութիւններով բոլորը պատկերել, իսկ բուն նկարագրութիւնների մէջ թուարկել կնքագրոշմների ցանկի համարները. ասենք՝ «Կնքագրոշմ» Հ^մ 5, 7, 11»: Հնարաւորութեան դէպքում պէտք է քննուեն-պարզուեն նաեւ կնիքների գործածութեան ժամանակները:

Որեւէ տեսակի գրառման չգոյութեան դէպքում նրան վերաբերող հարցը եւ պատասխանը չի գրուելու. այսինքն՝ եթէ գրքի մէջ «Գրչափորձ» չկայ, այս բառը եւ «չկայ» պատասխան չի գրուելու:

Գրուելու են բոլոր գրառումների տեղերը՝ էջ, պահպանակ, կազմի Ա. փեղկ, Բ. փեղկ, կազմաստառ լուսանցակող. եւ այլն:

Գրքերի շարագրանքներին (բնագրերին) վերաբերող գրառումները բերուելու են շարագրանքի հետ զուգորդուած ծանօթագրութիւնների ձեւով:

Գրառումները վերարտագրուելու են բնագրական ճշգրիտ տեսքով, ընդգծելով՝ այլ տառատեսակով շեշտելով ուղղագրական շեղումները եւ սխալագրութիւնները, վերջիններիս անհասկանալիութեան դէպքերում բացատրելով ճիշտ ձեւերը:

Գրառումներում բացակայող կամ առկայ անկանոն կէտադրութեան փոխարէն նկարագրողները կետադրելու են ըստ ներկայիս կանոնների:

Մնացեալը եւ պայմանական բոլոր կանոնները՝ ինչպէս ձեռագրերի նկարագրութիւնների մէջ է արուում՝ ///, [], < >, (), «այսպէս». եւ այլն²⁴:

* * *

Ժողովուած նիւթի թելադրանքով էլ կազմուելու են ցուցիչ ցանկերը.

²³ Այսպէս լինելու է այն դէպքում, եթէ Մաշտոցեան Մատենադարանի եւ Ազգային գրադարանների գրքերի նիւթը հրատարակուելու լինի միատեղ: Այս երկրորդի եւ լինելի յաջորդների դէպքում եւս լինելու են «Ուրբաթագրքի» ներոյ նշուած ա-դ. ենթահամարները:

²⁴ Անշուշտ, այս սկզբումները եւ կառուցուածքի մանրամասները վերջնական չեն, նիւթի ժողովման ընթացքում ենթակայ են փոփոխուելու թէ՛ աշխատանքային խմբում եւ թէ՛ ըստ ընթերցողների հնարաւոր առաջարկների:

նախնաբար ենթադրելի են հետեւեալները.
 Յիշատակարանների ժամանակագրական.
 Հաստատութիւնների եւ գրադարանների.
 Անձնական գրադարանների տէրերի.
 Նուիրատուների.
 Ստացող տէրերի եւ գնորդների.
 Վաճառողների.
 Վաճառքի միջնորդների.
 Յիշատակուած անձնանուններ²⁵.
 Վաճառքի գներ յիշատակող գրքերի.
 Ձեռագիր թերթեր ունեցող գրքերի.
 Տեղանունների. եւ այլն:

GEORG TER-VARDANEAN

**THE PROGRAM OF COMPOSING THE CORPUS OF
 HANDWRITTEN REMARKS AND LIBRARY NOTES IN
 ARMENIAN EARLY PRINTED BOOKS**

Key words: Libraries of the Late Middle Ages, early printed Armenian books, library and handwritten notes in the printed books, colophons of manuscripts, collections of colophons.

The article lists the not yet examined sources for a comprehensive study of medieval Armenian libraries. These are literary evidence, information in handwritten colophons, reference books or catalogues of monastic, personal and other libraries, donation registers of monasteries and churches, as well as, finally, notes that are often found in handwritten books. The whole process of their creation, subsequent life, movements and ownership are perfectly described in the scribal and later colophons of the manuscripts. Accordingly, comprehensive catalogues of manuscripts are reliable and very valuable sources for the history of our literature and libraries.

In the 16th–19th centuries, Armenian handwritten and printed books lived side by side, served for the same purposes and performed the same functions. As in manuscripts, handwritten notes of contemporary or later owners, long or short colophons and various remarks, as well as library inventory numbers also occur on

²⁵ Նոյն գրքի մէջ նոյն անունը մի քանի ցանկում գրելու անյարմարութիւնից խուսափելու համար գուցէ նպատակայարմար լինի կազմել Անձնանունների ընդհանուր ցանկ, տարբեր տեսակի (նուիրատու, տէր եպն) անձանց վերաբերող էջահամարների (կամ՝ ֆաղագրուած գրքերի համարների եւ ենթահամարների) վրայ լրացուցիչ պայմանական նշաններ (*, +, x...) դնելով, ինչպէս մեր առաջարկով արուել է հետեւեալում. *Մատենագիտութիւն «էջմիածին» ամսագրի (1974-2008 թթ.), Կազմող՝ Տէր Արարատ քահանայ Պօղոսեան, հմբագիր՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Ս. էջմիածին, 2012, էջ 430-464:*

various pages, margins and even on covers. Therefore, the author of the article is convinced that the source basis of complex research of Armenian libraries of the distant and recent past should be completed by the preparation of a corpus of handwritten notes and library records in early printed books. The work carried out in this direction in Matenadaran and the National Library of Armenia and an outline of the desired structure of the corpus are briefly presented.

ГЕВОРГ ТЕР-ВАРДАНЯН

**ПРОГРАММА СОСТАВЛЕНИЯ СВОДА РУКОПИСНЫХ ЗАПИСЕЙ
И БИБЛИОТЕЧНЫХ ЗАМЕТОК НА СТАРОПЕЧАТНЫХ
АРМЯНСКИХ КНИГАХ**

Ключевые слова: Библиотеки позднего средневековья, армянские старопечатные книги, рукописные и библиотечные записи в старопечатных книгах, рукописные памятные записи, сборники памятных записей.

В статье перечислены по сей день не исследованные источники для комплексного изучения средневековых армянских библиотек – свидетельства литературных источников, сообщения в памятных записях рукописей, каталоги монастырских, личных и иных типов библиотек, дарственные книги монастырей и церквей и, наконец, пометы, часто встречаемые в рукописных книгах. Благодаря полному воспроизведению памятных записей, современных созданию рукописей, и позднейших помет, в подробных описаниях исчерпывающим образом представляется весь процесс написания рукописей, их последующая жизнь, все перемещения и владельцы. Следовательно, подробные рукописные каталоги являются достоверными и очень ценными источниками изучения истории литературной и книжно-библиотечной культуры.

На протяжении XVI-XIX веков армянские рукописные и печатные книги бытовали бок о бок, служили одним и тем же целям, выполняли одни и те же функции. Как в рукописях, так и в старопечатных книгах – на свободных страницах, полях, и даже на обложках и оборотных сторонах обложек – сразу после их выхода в свет появлялись рукописные заметки первых и последующих владельцев: обширные или краткие памятные записи и различные пометы, а также (и довольно часто) библиотечные инвентарные номера. Поэтому источниковедческую основу комплексных исследований армянских библиотек далекого и недавнего прошлого следует дополнить составлением «Свода рукописных записей и библиотечных помет старопечатных книг». В статье кратко описывается ход работ, проводимых в этом направлении в Матенадаране имени Маштоца и Национальной библиотеке Армении, а также намечается примерная структура подобного «Свода».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոգոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցիև և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակները
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի 350

ԲԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էննա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘..... 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Азат Бозоян	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
Карен Матевосян	
Антикатоликос румского султаната Анания.....	22
Гагик Даниелян	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
Элина Казарян	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
Георгий Мирзабекян	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г.	74
Айказ Оганесян	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

ФИЛОЛОГИЯ

Давид Геворгян	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
Донара Карапетян	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
Анна Оганджян	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

ИСКУССТВО

Авет Аветисян	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
Седа Манукян	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
Анна Аревшатян	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмяляна и Комитаса.....	212

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

Лусине Туманян

Гандзы и таги Ованеса Бргутенца 268

Асмик Киракосян

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши 295

Мигран Минасян

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах 321

Татевик Манукян, Кнарик Саргсян

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

Эрмине Григорян

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне 350

ДИСКУССИЯ

Нарине Варданян

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

Манеа Эрна Ширинян

XXIV всемирный конгресс византинистов 420

НЕКРОЛОГ

Назени Гарибян

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/